

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔԷՋԻ  
«ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԷՋ ԲԱՅԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Հարգելի փաստաբաններ,**

ՀՀ փաստաբանների պալատի կայքի «Գրասենյակներ» բաժնում փաստաբանական գրասենյակի մասին տեղեկությունները հրապարակելու համար ՀՀ փաստաբանների պալատի [info@advocates.am](mailto:info@advocates.am) էլեկտրոնային փոստով անհրաժեշտ է տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Փաստաբանական գրասենյակի անվանումն ամբողջական (ըստ կազմակերպության պետական գրանցման վկայականի կամ կանոնադրության), ներառյալ՝ կազմակերպարավական ձևը՝ հայերեն և անգլերեն լեզուներով.

2. կազմակերպության հասցեն, հեռախոսահամարները, հեռապատճենը, էլեկտրոնային փոստի հասցեն և կայքի հասցեն (առկայության դեպքում).

3. մասնագիտացումը (հատկապես ի՞նչ ոլորտի գործերով է զբաղվում գրասենյակը): Կայքում նախատեսված մասնագիտացումների ցանկը կարող եք տեսնել կայքի «Փաստաբաններ» էջում՝ հետևյալ հղումով <http://advocates.am/advocates.html>

4. գրասենյակի հիմնադիր փաստաբանի մասին տեղեկություն՝ վերջինիս անունը, ազգանունը և արտոնագրի համարը.

5. գրասենյակում աշխատող փաստաբանների անունները, ազգանունները և արտոնագրի համարները.

6. կազմակերպության ապրանքային նշանի (լոգոյի) ֆայլը (վեկտորային տարբերակով).

7. աշխատակիցների թիվը (նաև ոչ փաստաբաններ աշխատակիցների):

8. գրասենյակի գործունեության հակիրճ նկարագրական տեքստ:

**Փաստաբանական գրասենյակի էջի համար պարտադիր են համարվում վերոնշյալ տեղեկություններից 1-ից 4-րդ կետերում նշված տեղեկությունները:**

**Էլեկտրոնային փոստին կից անհրաժեշտ է կցել նաև կազմակերպության կանոնադրության, իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի սրանավորված տարբերակը:**

**Եթե կազմակերպության ապրանքային նշանը գրանցված է, ապա անհրաժեշտ է կցել նաև այդ մասին համապատասխան փաստաթուղթ:**

Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված [Փաստաբանի վարքագծի կանոնագրի](#) 1.4 ենթակետի համաձայն՝ **փաստաբանական գրասենյակ է համարվում – (1) առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն և նրա կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցություն ունի փաստաբանը, կամ (2) անհատ ձեռնարկատեր փաստաբանը, ով իրականացնում է փաստաբանական գործունեություն անձամբ կամ աշխատակազմի միջոցով, կամ (3) ոչ առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն:**

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
աշխատակազմ